АЖ146

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (6 Յունուար 1990 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:
«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Սիրելի հաւատացեալներ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի,

Մեր Մայր Եկեղեցին առաքելական, այսօր աւետում է լոյս ծնունդը և աստուածայայտնութիւնը Յիսուսի, Որդւոյն Աստուծոյ, որ մարմնացաւ որպէս մարդ Սուրբ Կոյս Մարիամից, աշխարհին բերելու համար խօսքը Հօր Աստուծոյ, որի մասին վկայում է Ղուկաս աւետարանիչը, թէ՝ «Աստուած Իր Որդուն ուղարկեց աւետարանելու աղքատներին, բժշկելու սրտով վիրաւորներին, ազատելու գերիներին, քարոզելու կոյրերին տեսողութիւն, ազատ արձակելու կեղեքուածներին» (Ղուկաս Դ 18—19):

Ա՛յս երազանքներով, ա՛յս սուրբ սպասումներով է, որ մարդիկ դիմաւորեցին Ծնունդը Յիսուսի, հրաշալի պատկերացումներով:

Յիսուսի Ծնունդը աւետուել էր աշխարհին, պատգամովը հրեշտակների՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», երբ երկնքի բարձունքներից ծագել էր մի ճառագայթող աստղ իբրև մեծ ու սքանչելի խորհուրդ, ծանուցելու, թէ ծնուել էր Փրկիչը մարդկութեան:

Այսպէս է որ Յիսուս եղաւ ու մնաց մինչև այսօր Իշխան խաղաղութեան ու Արեգակ արդարութեան, ինչպէս գուշակել էր Եսայի մարգարէն, ինչպէս երգել էին հրեշտակները Բեթղեհէմի երկնքի բարձունքներից:

Արդարութիւնը և խաղաղութիւնը նաև մեր օրերին մնում են հրաշք երազանքներ, սուրբ սպասումներ աշխարհի ժողովուրդների համար, որոնք իրենց յուսացեալ հայացքները դէպի երկինք յառած, աղերսում են Աստծուց, որ Յիսուսի ծնունդով ծանուցուած փրկարար պատգամները իրապէս կեանքի ուղեցոյց դառնան մարդկանց ու պետութիւններին:

Աշխարհում եղել են ու կան անարդարութիւններ անհատ մարդկանց նկատմամբ, եղել են ու կան անարդարութիւններ հաւաքականութիւնների և մանաւանդ ազգութիւնների նկատմամբ, որոնք պատճառում են այնքան

տառապանքներ, այնքան տագնապներ, այնքան արհաւիրքներ ու ողբերգութիւններ:

Յիսուս աշխարհ եկաւ՝ բերելու իր երկնային խաղաղութիւնը, որ պտուղը է արդարութեան. իսկ խաղաղութեան արդիւնքն է՝ անդորրութիւն, ներդաշնակութիւն և ապահովութիւն: Մինչ անարդարութիւնը խափանում է թէ՛ խաղաղութիւնը, թէ՛ անդորրութիւնը և թէ՛ ի մարդիկ հաճութիւնը:

Սիրելի հաւատացեալներ, Յիսուսի Սուրբ Ծննդեան մեծ ու սքանչելի խորհուրդը այս օրերին, մեր հայրենի վիրաւոր ժողովրդի համար, արդարութիւն տեսնելու, արդարութիւն որոնելու մի լուսոյ ճանապարհ է, յոյս և մխիթարանք ներշնչող, թէ՝ Հայոց աշխարհում, մեր կեանքի հորիզոնի վրայ, պիտի շողա՛յ վերջապէս Արեգակը արդարութեան և խաղաղութեան:

Մեր ազգի պատմութեան ընթացքում, այն երանելի օրերից, երբ Քրիստոսի լոյսը իջաւ ի Հայաստան աշխարհ, և մանաւանդ Աւարայրից մինչև Սարդարապատ, արդարութեան ու խաղաղութեան ծարաւի հայերը մարտնչել են միշտ վասն հաւատոյ և վասն հայրենեաց, աստեղային ժամերին նախընտրելով ազատ մեռնել, քան ստրուկ ապրել, ինչպէս հին աշխարհում Տերմոպիլէսի հելլենները և այնուհետև այլ հերոսական ազգեր դարերի ընթացքում:

Քրիստոսի Սուրբ Ծննդեան այս առաւօտեան Մեր յորդորն է, որ մեր հաւատաւոր ժողովուրդը, պահելով հանդերձ մեր նախնեաց հերոսական ա՛յդ ոգին, դէպի արդարութիւն ու ազատութիւն տանող ճանապարհին մընան միաժամանակ յոյժ զգոյշ ու խորամիտ՝ դէմ-յանդիման այս անիրաւ աշխարհի փորձութիւնների ու որոգայթների, որոնք կարող են սպառնալ մեր ազգի գոյատևմանն իսկ:

«Ով Տէր, ցոյց տուր մեզ Քո ճանապարհները, սովորեցրու մեզ Քո շաւիղները, առաջնորդիր մեզ Քո ճշմարտութեան մէջ և սովորեցրու մեզ, քանզի Դու ես մեր փրկութիւնը՝ Աստուած» (Սաղմոս ԻԵ 4—5):

Արդ, սիրելի հաւատացեալներ, մեր այս տագնապալի տխուր օրերին, երբ միգապատ է հորիզոնը մեր հայրենի աշխարհի, մեր դէմքը դարձնենք դէպի Յիսուս, Արեգակը արդարութեան և մնանք անսասան մեր լոյս հաւատքի վէմի վրայ, առանց տկարանալու, առանց վհատուելու:

Այո՛, հարազատներ Մեր «քաջալերուէք, ու ձեր սրտերը թող զօրանան, դուք, որ յուսացեալ էք ի Տէր» (Սաղմոս ԼԱ 25):

Նոր տարուայ այս լուսաբացին, Մենք խոր յուզումով ողջունում ենք երկնառաք աւետիսը մեր Փրկչի՝ Քրիստոսի Սուրբ Ծննդեան, հաւատքով լի, որ մեր Մայր Եկեղեցին ու համայն մեր ժողովուրդը, վերստին լուսաւորուած երկնառաք շնորհներով, պիտի կարողանան հոգւով վերանորոգուել, արիանալ ու մշտանորոգ եռանդով բուժել իրենց վիրաւոր մարմինը և հասնել մեր բոլորիս արդար սպասումների իրականացման ափին, խաղաղութեամբ:

Մայր Հայրենիքից և Սուրբ Էջմիածնից ձեզ բոլորիդ ու բոլորին Մեր հայրական սէրն ու քաջալերանքը, Մեր օրհնությունն ու բարի մաղթանքները:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մեր Քրիստոսի ընդ ձեզ, ընդ ամենեսեան». ամէն:

Շնորհաւոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ: